



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

16 ապրիլի 2014 թ. № 44 - Ա/1  
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից երիտասարդական հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման կանոնակարգումը բարելավելու նպատակով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի № 825-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ բաժնի 11-րդ կետի 4-րդ և 8-րդ ենթակետերի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից երիտասարդական հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանով հաստատված կարգի պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

## Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ  
ԴՐԱՄԱՇՆՈՐՈՒՄԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից երիտասարդական հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման կարգն ու պայմանները:

2. Կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **համակարգ**՝ Նախարարության համակարգում գործող առցանց էլեկտրոնային կայքի ([www.cragrer.am](http://www.cragrer.am)) միջոցով երիտասարդական հասարակական կազմակերպություններին պետական դրամաշնորհների տրամադրման համակարգ.

2) **անկախ փորձագետ**՝ համակարգում գրանցված և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով հաստատված՝ ծրագրերի փորձագիտական գնահատում իրականացնող փորձագետ.

3) **աշխատանքային խումբ**՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2012 թվականի մարտի 5-ի «Դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ ստեղծելու մասին» № 16-Ա/1 հրամանով ստեղծված աշխատանքային խումբ.

4) **մեկնարկային ծրագրեր**՝ համակարգով առաջին անգամ ներկայացված ծրագրեր.

5) **ազատ ծրագրեր**՝ համակարգում նշված հիմնական առաջնայնություններից բխող ծրագրեր, որոնց համար յուրաքանչյուր եռամսյակը մեկ հայտարարվում են մրցույթներ.

6) **նպատակային ծրագրեր**՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության գերակայություններից բխող ծրագրեր.

7) **հատուկ ծրագրեր**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա Նախարարության մասով գերակա խնդրից բխող ծրագրեր, որոնց համար լրացուցիչ հայտարարվում են հատուկ մրցույթներ:

3. Համակարգը Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում առցանց մրցութային կարգով դիմելու դրամաշնորհային ծրագրերին՝ ներկայացնելով համապատասխան ծրագրի հայտ:

Համակարգի միջոցով ծրագրի հայտ ներկայացնելու համար հասարակական կազմակերպությունը սահմանված կարգով պետք է գրանցվի համակարգում՝ լրացնելով գրանցման ձևը: Համակարգում գրանցվելուց հետո կազմակերպությունը ստանում է գաղտնաբառ, որի միջոցով հետագայում կարող է մուտք գործել համակարգ, ներկայացնել

ծրագրի հայտ, ինչպես նաև ծրագիրը ֆինանսավորվելու դեպքում՝ ներկայացնել ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն:

4. Դրամաշնորհային ծրագրերը կարող են լինել հետևյալ տեսակների.

1) «Հանդիպում» տեսակի ծրագիր

Այս տեսակի ծրագրի առանձնահատկությունն այն է, որ ծրագրով նախատեսված հիմնական միջոցառումն իրագործելու համար անհրաժեշտ է ունենալ (ներգրավել) համապատասխան պայմաններին բավարարող տարածքներ (դահլիճներ, հանդիպումների սրահներ և այլն), ինչպես նաև մասնակիցների կեցությունն ապահովելու որոշակի պայմաններ:

2) «Հանդիպումից զատ» տեսակի ծրագրեր

Այս տեսակի ծրագրի առանձնահատկությունն այն է, որ ծրագրով նախատեսված հիմնական միջոցառումն իրագործելու համար պարտադիր չէ ունենալ համապատասխան պայմաններին բավարարող տարածքներ: Այս ծրագրերը ներառում են տարբեր ուսումնասիրություններ, ճանաչողական այցեր, հրապարակումներ, երիտասարդական խորհրդատվության մատուցմանը և տեղեկատվության տարածմանն ուղղված միջոցառումներ (տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում, ինտերնետային կայքերի ստեղծում, քարոզչություն, ցուցադրական նյութերի պատրաստում և այլն), կամավորական աշխատանքներ, ցուցահանդեսներ, ցանցային աշխատանքներ և այլն:

3) «Համաֆինանսավորում» տեսակի ծրագրեր

Համաֆինանսավորումը կարող է կիրառվել ինչպես «Հանդիպում», այնպես էլ «Հանդիպումից զատ» տիպի ծրագրերի դեպքում: Համաֆինանսավորման իմաստն այն է, որ առնվազն երկու կողմ մասնակցում են տվյալ ծրագրի ֆինանսավորմանը:

Այս տեսակի ծրագրերը համակարգում սերտորեն առնչվում են այն ծրագրերի հետ, որոնք ունեն պոտենցիալ կամ արդեն իսկ հաստատված ֆինանսավորող կողմ, և ծրագիրը ներկայացնող կազմակերպությունն ակնկալում է պետության աջակցությունը (համաֆինանսավորումը) ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ձեռք բերելու գործում:

Պահանջվող համաֆինանսավորման պահանջը կարող է ներառել որոշակի տեսակի ծախսերի փոխհատուցում (օրինակ՝ կեցության կամ ուղևորության ծախսերի համաֆինանսավորում) կամ ծախսերի որոշակի բաժնեմասի փոխհատուցում:

5. Ներկայացված դրամաշնորհային ծրագրերի հայտերի փորձագիտական գնահատումն իրականացնում է անկախ փորձագետը: Համակարգը տրամադրում է համապատասխան գործիքներ ներկայացված հայտերը գնահատելու համար:

6. Անկախ փորձագետը համակարգի կողմից ընձեռած գործիքներն օգտագործելու համար պետք է գրանցվի համակարգում՝ համապատասխան գրանցման ձևը լրացնելու միջոցով, որում անպայմանորեն նշվում են փորձագիտական գնահատման համապատասխան ոլորտները:

7. Ձևը լրացնելուց հետո անկախ փորձագետի թեկնածուները մասնակցում են հարցազրույցի, որն իրականացվում է աշխատանքային խմբի կողմից:

8. Հարցազրույցի փուլը հաղթահարած թեկնածուները Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով հաստատվում են որպես համակարգի անկախ փորձագետներ:

9. Դրանից հետո անկախ փորձագետի և Նախարարության «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև

կնքվում է պայմանագիր, որով սահմանվում են անկախ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները:

10. Անկախ փորձագետը պարտավոր է ծրագրերի փորձագիտական գնահատման ընթացքում կամ դրանից հետո չհրապարակել իրեն վստահված կամ հայտնի դարձած առևտրային, ծառայողական, բանկային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ, ինչպես նաև գնահատված ծրագրերի կամ գնահատման վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն:

11. Անկախ փորձագետը գնահատում է դրամաշնորհային ծրագրերը՝ ներկայացնելով մեկնաբանություն հետևյալ 24 հարցադրումների վերաբերյալ.

1) Ծրագրի իրականացման անհրաժեշտության հիմնավորում (20 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես հիմնավորված չէ - 1 միավոր,

հիմնավորված է մասնակի - 2-7 միավոր,

հիմնականում հիմնավորված է - 8-14 միավոր,

հիմնավորված է ամբողջությամբ - 15-20 միավոր:

2) Համայնքի/թիրախ խմբի կարիքներն իրատեսական են և հիմնավորված (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես հիմնավորված չէ - 1 միավոր,

հիմնավորված է մասնակի - 2-4 միավոր,

հիմնականում հիմնավորված է - 5-7 միավոր,

հիմնավորված է ամբողջությամբ - 8-10 միավոր:

3) Ծրագրի խնդիրները հասանելի, չափելի ու իրատեսական են և համապատասխանում են դրված նպատակներին (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես հիմնավորված չէ - 1 միավոր,

հիմնավորված է մասնակի - 2-4 միավոր,

հիմնականում հիմնավորված է - 5-7 միավոր,

հիմնավորված է ամբողջությամբ - 8-10 միավոր:

4) Ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության գերակայություններից մեկին (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես չի համապատասխանում - 1 միավոր,

համապատասխանում է մասնակի - 2-4 միավոր,

հիմնականում համապատասխանում է - 5-7 միավոր,

համապատասխանում է ամբողջությամբ - 8-10 միավոր:

5) Ծրագրի պլանավորումն իրատեսական է և հնարավոր է դարձնում դրված խնդիրների իրականացումը (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես իրատեսական չէ - 1 միավոր,

իրատեսական է մասնակի - 2-4 միավոր,

հիմնականում իրատեսական է - 5-7 միավոր,

իրատեսական է ամբողջությամբ - 8-10 միավոր:

6) Երիտասարդներն առավելագույնս մասնակցում են ծրագրի բոլոր փուլերին (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես չեն մասնակցում - 1 միավոր,

մասնակցում են մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում մասնակցում են - 5-7 միավոր,  
մասնակցում են ամբողջությամբ - 8-10 միավոր:

7) Ծրագիրը խթանում է մասնակիցների ոչ ֆորմալ ուսուցումը և սոցիալական/անհատական զարգացումը (5 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես չի խթանում - 1 միավոր,  
խթանում է մասնակի - 2 միավոր,  
հիմնականում խթանում է - 3-4 միավոր,  
խթանում է ամբողջությամբ - 5 միավոր:

8) Նախանշված է ծրագրի իրատեսական շարունակելիության ձևը և/կամ կայունության ապահովման մեխանիզմ (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես նախանշված չէ - 1 միավոր,  
նախանշված է մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում նախանշված է - 5-7 միավոր,  
նախանշված է ամբողջությամբ - 8-10 միավոր:

9) Ապահովված են ծրագրի առավելագույն տեսանելիության մեխանիզմներ (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես ապահովված չեն - 1 միավոր,  
ապահովված են մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում ապահովված են - 5-7 միավոր,  
ապահովված են ամբողջությամբ - 8-10 միավոր:

10) Ապահովված են մեխանիզմներ ծրագրի արդյունքների տարածման համար (5 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես ապահովված չեն - 1 միավոր,  
ապահովված են մասնակի - 2 միավոր,  
հիմնականում ապահովված են - 3-4 միավոր,  
ապահովված են ամբողջությամբ - 5 միավոր:

11) Կազմակերպությունը նախկինում իրականացրել է նման ծրագրեր (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես չի իրականացրել - 1 միավոր,  
իրականացրել է մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում իրականացրել է - 5-7 միավոր,  
իրականացրել է ամբողջությամբ - 8-10 միավոր:

12) Ծրագիրը համահունչ է կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես համահունչ չէ - 1 միավոր,  
համահունչ է մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում համահունչ է - 5-7 միավոր,  
համահունչ է ամբողջությամբ - 8-10 միավոր:

13) Ծրագիրը նախատեսում է համագործակցություն այլ կազմակերպությունների հետ (5 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես չի նախատեսում - 1 միավոր,

նախատեսում է մասնակի - 2 միավոր,  
հիմնականում նախատեսում է - 2-4 միավոր,  
նախատեսում է ամբողջությամբ - 5 միավոր:

14) Առկա են համագործակցությունը հավաստող փաստաթղթերը (5 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես առկա չեն - 1 միավոր,  
առկա են մասնակի - 2 միավոր,  
հիմնականում առկա են - 2-4 միավոր:  
առկա են ամբողջությամբ - 5 միավոր:

15) Ծրագրի աշխատակազմի փորձը բավարար է նախանշված դերերի կատարման համար (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես բավարար չէ - 1 միավոր,  
բավարար է մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում բավարար է - 5-7 միավոր,  
բավարար է ամբողջությամբ - 8-10 միավոր:

16) Ծրագրի մասնագետների, փորձագետների, ուսուցանողների փորձը բավարար է նախանշված դերերի կատարման համար (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես բավարար չէ - 1 միավոր,  
բավարար է մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում բավարար է - 5-7 միավոր,  
բավարար է ամբողջությամբ - 8-10 միավոր:

17) Ծրագրի մասնակիցների ընտրության կարգը հստակ և թափանցիկ է (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես հստակ և թափանցիկ չէ - 1 միավոր,  
հստակ և թափանցիկ է մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում հստակ և թափանցիկ է - 5-7 միավոր,  
հստակ և թափանցիկ է ամբողջությամբ - 8-10 միավոր:

18) Մասնակիցների ընտրության ժամանակ պահպանված են աշխարհագրական, սեռային բալանսները (3 առավելագույն միավոր, աշխարհագրական բալանսի պահպանումը չի վերաբերում համայնքային ծրագրերին)՝

ընդհանրապես պահպանված չեն - 1 միավոր,  
հիմնականում պահպանված են - 2 միավոր,  
պահպանված են ամբողջությամբ - 3 միավոր:

19) Ծրագրում նախատեսված է ներգրավել սահմանափակ հնարավորություններով երիտասարդների (10 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես նախատեսված չէ - 1 միավոր,  
նախատեսված է մասնակի - 2-4 միավոր,  
հիմնականում նախատեսված է - 5-7 միավոր,  
նախատեսված է ամբողջությամբ - 8-10 միավոր:

20) Ծրագրի ծախսային մասն իրատեսական է և հիմնավոր, պլանավորումը կատարված է ողջամտորեն (15 առավելագույն միավոր)՝

ընդհանրապես իրատեսական, հիմնավոր և ողջամտորեն պլանավորված չէ - 1 միավոր,